# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանան Ընդ Յան ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/79 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 7 | Մարմնամարզական պատ – Հենարանային կանգնակները պետք է պատրաստված լինեն պինդ սոճուց, աստիճանաձողերը՝ պինդ հաճարենուց, թխկիից կամ պինդ կեչիից: Մարմնամարական պատի բարձրությունը պետք է լինի 2900-3000մմ, լայնությունը՝ 900մմ, վերին հատվածի խորությունը՝ 280մմ, և, 140մմ՝ մնացած բարձրության երկայնքով: Ուղղահայաց կանգնակների հատվածքի չափերն են՝ 140x40մմ: Աստիճանաձողերը պետք է լինեն օվալաձև Φ35x50(h)մմ չափերի /տես նկար-1/: Աստիճանաձողերի միջև առանցքային հեռավորությունը պետք է լինի 180մմ: Աստիճանաձողերի առավելագույն ծանրաբեռնվածությունը պետք է լինի 120կգ: Ստորին ձողը պետք է տեղակայված լինի հատակից 150մմ բարձրության, իսկ վերին ձողը պետք է լինի 80-100մմ առաջ մյուս աստիճանաձողերի համեմատ: Վերին ձողը պետք է ունենա կլոր հատվածք՝ Φ40մմ տրամագծով: Այն նախատեսված է ձողան օգտագործելու համար: Վերին ձողանի հեռավորությունը ներքևի աստիճանաձողից պետք է լինի 400մմ: Վերին ձողանը պետք է լաքապատված լինի բարձրորակ խոնավակայուն և չսահող լաքով: Աստիճանաձողերի ամրացումը չպետք է լինի մեխով կամ հեղյուսով: Մարմնամարզական պատի բոլոր ամրացումները պետք է իրականացվեն բարձորակ և ամուր դետալներով, դիմակայեն առավելագույն ծանրաբեռնվածության հանրագումարին: Նմուշը /նկար 7/ կցվում է (նմուշ նկարները տրվում են զուտ ընդհանուր պատկերացում կազմելու նպատակով և չեն կազմելու հետագայում կնքվող պայմանագրի մաս): Պայմանագրի կատարման փուլում ձեռքբերվող ապրանքների պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական նյութերի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության |

| | |
|---|---|
| | սերտիֆիկատի առկայությունը: Ապրանքները պետք է լինեն նոր` չօգտագործված: Մատակարարումը ըստ ուսումնական հաստատությունների /պատվիրատուի կողմից տրամադրված բաշխման ցանկին համապատասխան/ պետք է իրականացնի Մատակարարն իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետը սահմանվում է 365 օր` հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Մատակարարված ապրանքները պետք է Մատակարարն իր միջոցների հաշվին մոնտաժի` տեղադրի մատակարարման վայրում համաձայնեցնելով պատվիրատուի հետ /ըստ անհրաժեշտության/: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Քանան Ընդ Յան ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/79 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 7 | |